



# Հայաստանի Հանրապետության ուստիկանություն



Տպագրվում է 1990 թվականից

1 (1400) • 11 հունվարի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

# Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

## Աշխատանքային խորհրդակցություն ոստիկանությունում

Հունվարի 8-ին ոստիկանությունում տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն, որը վարում էր ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը:



Մասնակցում էին ճանապարհային ոստիկանության ղեկավարությունն ու ենթակա ստորաբաժանումների ծառայողները:

Գեկտեմբերի 15-ից ոստիկանությունը, այդ թվում՝ ճանապարհային ոստիկանությունը, անցել էր ուժեղացված ծառայության: Վալերիյ Օսիպյանը շնորհակալություն հայտնեց բարեխիղճ ծառայության համար: Թեև կային որոշ բացթողումներ, բայց ճանապարհային ոստիկանության նախատեսված ու տոնական օրերի ծառայությունը ոստիկանության պետը ընդհանուր առմամբ դրական գնահատեց:

Վալերիյ Օսիպյանը հորդորեց չբավարարվել ձեռք բերվածով ու շարունակել բարեխիղճ ծառայությունը, բարձրացնել հաշվառման-բնական ստորաբաժանումներում ծառայության որակը, ճանապարհապարեկային ծառայությունը առավել հաճախ կազմակերպել այն վայրերում, որտեղ լինում են եղանակային վատ պայմաններ, օգնել ու աջակցել վարորդներին:



Նր: Հրաման տրվեց հանդուրժողականություն չցուցաբերել ոչ մի օրինախախտի նկատմամբ, բացառել շարայուններով երթևեկող մեքենաների

ստորիդակցությանը բնակավայրերում ծառայության բարձրացման ուղղված այլ հարցեր ես:

Ոստիկանության պետը խիստ հանձնարարեց բացառել կոռուպցիոն որևէ դրսեւորում եւ նշեց, որ ծառայությունը հաճախ ստուգվելու է:

Ստուգվելու է կատարվել:

## Հետախուզվում էր սպանության համար

Գեկտեմբերի 31-ին, ժամը 01.20-ին, հիվանդանոցից ոստիկանության Տավուշի բաժնում հաղորդում ստացվեց, որ հրազենային վնասվածքով իրենց մոտ է տեղափոխվել 27-ամյա Աշոտ Գեորգյանի դին:



Հիվանդանոց մեկնած ոստիկանության ծառայողները պարզեցին, որ Աշոտ Գեորգյանին մահացու հրազենային վնասվածքը պատճառել են Բերդ բաղաբի Մաշտոցի 33 հասցեում: Չեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումների արդյունքում պարզվեց կատարողի ինքնությունը: Բերդի բնակիչ, 39-ամյա Հարություն Գեորգյանն էր:

Հարուցվեց քրեական գործ: Հարություն Գեորգյանի նկատմամբ հայտարարվեց հետախուզում:

Ոստիկանության Տավուշի մարզային վարչության եւ Տավուշի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների ու բացատրական աշխատանքի շնորհիվ Հարություն Գեորգյանը հունվարի 8-ին ինքնական ներկայացավ Տավուշի ոստիկանություն՝ ներկայացնելով նաեւ հանցագործության գործիք «Բայկալ» որսորդական հրացանը:

Հարություն Գեորգյանը կալանավորված է:

## Ծառայություն տոնական օրերին

Տոնական օրերին ճանապարհային ոստիկանությունն իրականացրեց աննախադեպ ուժեղացված ծառայություն: Նպատակը մեկն էր՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում:



Հունվարի 1-ից 7-ը ճանապարհային ոստիկանները արձանագրել են վարչական իրավախախտման վերաբերյալ 1630 արձանագրություն: Անցած տարվա նույն ժամանակահատվածում այդ թիվը 483 էր:

Նույն օրերին ճանապարհային ոստիկանության պահպանվող հատուկ տարածքներ է տեղափոխվել 267 տրանսպորտային միջոց. 212-ով ավելի՝ անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Հայտնաբերվել է 225 ոչ սթափ վարորդ. անցած տարի հունվարի 1-ից 7-ը հայտնաբերվել էր 9 ոչ սթափ վարորդ:


Տոնական օրերին հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 72 պատահար, ինչի հետևանքով զոհվել է 7 մարդ: Անցած տարվա նույն օրերի համեմատությամբ զոհերի թիվը նվազել է 5-ով:

Նշենք, որ դրական թվային տվյալներն արձանագրվել են այն պայմաններում, որ միայն անցած տարի հանրապետություն է ներկրվել շուրջ 75 հազար տրանսպորտային միջոց:

Դժվար է ասել, թե ճանապարհային ոստիկաններն այս օրերին քանի ճանապարհատրանսպորտային պատահար են կանխել ու քանի մարդկային կյանք փրկել սակայն մի բան հաստատ է՝ ճանապարհային ոստիկանությունն իր տեղում է եւ պատվով իրականացնում է իր առաջ դրված խնդիրները:

## Սպանել էր հորը

Հունվարի 6-ին Սյունիքի մարզի Բռնակոթ գյուղ մեկնած «շտապօգնության» խումբը ոստիկանության Սիսիանի բաժնի հաղորդեց, որ սպանություն է կատարվել:



Դեպքի վայր մեկնեցին ոստիկանության Սիսիանի բաժնի եւ Սյունիքի մարզային վարչության օպերատիվ խմբերը: Իրավապահների օպերատիվ արձագանքի շնորհիվ հանցագործությունը բացահայտվեց թարմ հետքերով:

52-ամյա Դավիթ Հովակիմյանը վիճել էր ընտանիքի անդամների հետ: Նախնական տվյալներով խոհանոցային դանակով հարձակվել էր կնոջ ու 21-ամյա որդու՝ Նարեկ Հովակիմյանի վրա: Որդին վառարանին դրված աղյուսով մի քանի անգամ խփել էր հոր գլխին, ինչից հետո հայրը մեկ այլ դանակով կրկին հարձակվել էր նրա վրա: Այս անգամ որդին հոր ձեռքից վերցրել էր դանակն ու մի քանի անգամ խփել նրա կրծքավանդակին:

Նարեկ Հովակիմյանը հայտնաբերվել ու բերման է ենթարկվել ոստիկանության Սիսիանի բաժնի, ապա ներկայացվել Սիսիանի քննչական բաժնի ու կալանավորվել:

Տան խուզարկությամբ հայտնաբերվել է 400 գրամից ավելի մարիխուանա:

Կատարվում է քննություն:

## Դանակահարություն ծաղկահովիտում

Հունվարի 1-ին, ժամը 01.00-ին, հիվանդանոցից ոստիկանության Արագածի բաժնում հաղորդում ստացվեց, որ կտրած-ծակած վերքերով բուժօգնության են տեղափոխվել երկու երիտասարդ:



Մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ նախորդ օրը, ժամը 21.00-ի սահմաններում, Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ գյուղի խաչմերուկում, վիճաբանության ժամանակ, 17-ամյա Գ. Ն.-ն դանակահարել է 21-ամյա Սեւադա Ա.-ին եւ Վարդան Գ.-ին:

Չեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Գ. Ն.-ն ներկայացվել է բաժնի եւ տվել խոստովանական բացատրություն:

Կատարվում է քննություն:

## Մեղադրվում էր սպանության մեջ

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական ծավալուն միջոցառումների շնորհիվ Ուկրաինայի Հանրապետությունում հայտնաբերվել է սպանության մեղադրանքով հետախուզվող Շոթա Մաղլակելիձեն: Ազգությամբ վրացի Մաղլակելիձեն ղեկտեմբերի 21-ին Կիելից տեղափոխվեց Երևան ու բերման ենթարկվեց ոստիկանություն:



Քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողները Մաղլակելիձենին ներկայացրել են քննչական կոմիտեի հատկապես կարելուր գործերի քննության գլխավոր վարչություն:

էջ 2

**Դանակահարություն եւ առևանգում**

Աղջիկը կրծքավանդակի կտրած-ծակած վերքերով բուժօգնության էր տեղափոխվել հիվանդանոց: էջ 2

**Հողված 25-ը հետխուզվել է**

Վրաերթի ենթարկված պատանին ճանապարհը հատել էր ոչ թույլատրելի հատվածում: էջ 3

**Պարզարանում կրակոցով**

Դանել էր ինքնածիզը, լիցքավորել ու մեքենայի պատուհանից երեք-չորս անգամ օդ կրակել: էջ 6















10-րդ դ. ճարտ. համալիր Վանի ապին	Գրառուների տետր ժապավեն	Միապետի գլխին «Գող...ը»	Մուսա ... իսենյունյան	Պետոսի, Միջագետք Լուսաճազ	Թափանցիկ նյութ ճապոնացի գրող	Խորհրդ. կինոդերասան	Վայրի ցույց Գույն. դիզ. աստված
Չվոդ թռչուն Շահմուրայան				Կենտավորոս			Աճճական դերասան
		«...ը», ամերիկ. ֆիլմ «Նորմա»					Նոտա
Ազնավոր, երգ Բաղճանք				«Խաղաղ...ը»		Ուկրաին. քաղաք Ծառի մաս	

**Ուշադրություն**

**Հարգելի քաղաքացիներ**

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների և ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար զանգվելիք վարձավարները անհամեմատ մատչելի են:

Մինչև 120 քմ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավարները կկազմեն 5000-15000 դրամ: 120 քմ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավարները կկազմեն 10000-30000 դրամ:

Սանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արարկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Դերձակի գործիք Մարգարեական զենք		«...ի այգին»		Լայն Պայման. նշան
	Իսպան. նկարիչ և բանդ.		Հագնում էին տոգայի տակից	
Կինոնեժիտոր, ԱՄՆ		Կատվագրի գիշատիչ էկվադոր		
	Մեքսիկ. հնդկացի Ռուս ըմբիշ		Մուլորակ Պարանոց	
	Տուրգենևի Կաշալոտ Յոժաբա-կան			Մառ Ցգե ...
Գարեջուր	Մարիա ... Գին հարկատեսակ	Իտալացի երգահան Նյու ...	Լորենինների պուրակ Կատարավոր արտույտ	
			Արյունատար անոթ Գնագույն լեզու	Խոշոր թութակ
... Բեկնագարյան		Կղզի, Վեստ Ինդիա		Մատանու քար
Մարզածի «Գնչուական մեղեդիներ»			Անգույն թունավոր հեղուկ	ՌՂ մարդկենտրոն
	Ֆոտոն Տարեկան	Ամրոց, լեռն. Կիլիկիա	Առաջնորդ, նախագահ	Սրցման հատված
Կաբուկի ... Գվինեա	ԽԱՅՄ ֆուտ. չեմպիոն-1973			«... ռուսաց թագավորին»
Գյուղ, Գեղարքունիք Թոմաս ...		Պտղատու ծառ		Խորամանկ Գետակ
	Բնակելի վայր			Խորհրդ. զինագործ
	Նոր ...		Գրպանահատ	Ամանորի եղեմի
	Տանիքի բացվածք Դաբեթ, Քամ	Արևադարձային պտուղ	Միջագ. օլիմպ. ...	Ռահաթ ...
				Խմորանման զանգված
				Մորեդար

**Կ** խոյ - Սիրո եւ աշխատանքի ասպարեզում հետաքրքիր անակնկալներ են սպասում:

**Ց** թուլ - Նվաճումների տարի է լինելու. կլինեք դինամիկ, սիրվող, սիրող եւ ռոմանտիկ:

**Ի** երկվորյակ - 2019 թ. կյանքի նկատմամբ ձեր վերաբերմունքը կգարգանա յուրահատուկ ձևով:

**Շ** Խեցգետին - Ձեր կարիերան պատրաստվում է դրական էվոլյուցիա ապրել:

**Ո** Առյուծ - Կցանկանաք ընթանալ նոր ուղիներով: 2019-ը խոստանում է բարելավել ձեր կյանքը:

**Պ** Կույս - Տարեկազմի կզգաք մի



ները: Պետք է լինեք ակտիվ ուշադիր: Կարող եք ապրել անուշաճանաչ պահեր, նույնիսկ ամուսնացալ:

**Պ** Այծեղջյուր - 2019-ը լինելու է լիարժեք հաջողության եւ նվաճումների տարի: Պետք է լինել համբերատար եւ տոկուն, որպեսզի հասնեք բարձունքների:

**Զ** Ջրիս - Ցանկանաք գործողություն պլանավորելուց առաջ ուսումնասիրեք, որպեսզի կատարեք ճիշտ քայլեր:

**Խ** Չուկ - Այս տարի կհասնեք մեծ հաջողությունների բոլոր ոլորտներում: Մեծ կլինեն աշխատանքի պտուղները:

**Փորձեք լուծել**

**Խնդիր N1**

Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

**Խնդիր N2**

Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

**Նախորդ խնդիրների պատասխանները**

Խնդիր N1 1.g3-f4 b8:b4 2.f4:c1 x  
 Խնդիր N2 1. f2-g3 h2:f4 2.c3-d4 e5:c3  
 3.a5:c5x

Պատրաստեց **Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ**  
 Շաշկու  
 Հայաստանի չեմպիոն,  
 IDF վարպետ,  
 սպորտի վարպետ

**Նախորդ համարի սկզբնական պատասխանները**

Կ	Փ	Մ	Լ	Ա	Ք
Գ	Ա	Ս	Ո	Ա	Գ
Ռ	Ա	Ք	Փ	Ա	Լ
Վ	Լ	Ս	Պ	Ն	Ե
Պ	Ս	Ս	Լ	Ն	Ս
Ր	Ս	Լ	Լ	Մ	Ս
Վ	Ե	Ն	Ս	Վ	Ր
Ն	Լ	Ն	Ս	Ր	Ս
Ց	Ռ	Ց	Ա	Պ	Ր
Ց	Լ	Վ	Ա	Ս	Ք
Ի	Լ	Ք	Ս	Ն	Ս
Տ	Գ	Ա	Վ	Ա	Լ
Ք	Ռ	Ս	Ն	Ս	Վ
Կ	Ս	Ս	Վ	Ր	Ս
Տ	Ս	Վ	Ր	Ս	Ն
Ր	Ռ	Ք	Օ	Ս	Լ
Ս	Վ	Ր	Ս	Ն	Ս
Ր	Ռ	Ք	Օ	Ս	Լ
Ս	Վ	Ր	Ս	Ն	Ս
Ց	Լ	Վ	Ա	Ս	Ք
Ց	Լ	Վ	Ա	Ս	Ք

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Արաբեկյան: Գրանցման վկայական 27312002739: Տրվել է 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության 10.01.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6870: Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հեռակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը՝ «02»-ին պարտադիր է: Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատու պատվիրատուն է: